ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

11.12.2020 *Ք. Իջևան*

Մասնակցում էին գիտխորհրդի 24 անդամներից 20-ը

ՕՐԱԿԱՐԳ

1. 2020-2021 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստում: /Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
2. 2020-2021 ուստարվա երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստման և անցկացման մասին: /Զեկուցող՝ Կ. Պողոսյան /

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները ավարտված են: Կազմվել է քննաշրջանի ժամանակացույցը, որը քննարկվել է ամբիոններում և ուսանողների շրջանում: Ամբիոններում քննարկվել և հաստատվել են հարցատոմսերը: Զեկուցողը նշեց, որ համավարակի տեմպերով պայմանավորված, դեռևս հստակ չէ, քննությունների անձկացման վայրը (համավարակի թվերի նվազման դեպքում նախատեսվում է քննությունները իրականացնել լսարանայի պայմաններում, հակառակ դեպքում՝ հեռավար):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, Մ. Ասիլյանը, Ա. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-2021 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցողը ներկայացրեց 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը: Նշեց, որ այն քննարկվել է ուսանողների հետ: Զեկուցողը փաստեց, որ երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Այժմ ստուգվում է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Ստուգվում է ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան մատենավարության վիճակը: Նկատվում է, որ որոշ դասախոսների մոտ կան մատենավարական թերացումներ: Այդ բացերը քննարկման և շտկման փուլում են: Զեկուցողը խոսեց նաև ֆակուլտետում իրականացված դասալսումների մասին: Դասախոսությունների հեռավար իրականացումը լայն հնարավորություն է տալիս ամբիոնի վարիչներին դասալսումներ իրականացնել: Պարբերաբար կատարվում են նաև փոխադարձ դասալսումներ: Արդյունքները քննարկվում են, կատարվում են եզրակացություններ: Զեկուցողը նաև հավելեց, որքննաշրջանը կկազմակերպվի հեռավար՝ ZOOM հարթակի միջոցով՝ համավարակով պայմանավորված: Հսկողություն կլինի թե՛ դեկանատի, թե՛ Ուսումնամեթոդական վարչության աշխատակիցների կողմից

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, Մ. Ասիլյանը, Ա. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Վ. Աղաբաբյան